



# ԶԱՎԵԼ ԵՍԱՍՅԱՆ

## Կեղծ հանճարներ

ԺԳ.

Այն գիշեր, Տաճատ հակառակ իր հոգեկան լաւ տրամադրութիւններուն շատ գէշ ընթրեց, պատատները կոկորդին մէջ կը մնային եւ հագիլ թէ կը դպչէր ապսպրած կերակուրներուն. անոր փոխարէն գրգռիչ եւ ոգելից ըմպելիներ խմեց՝ կազդուրուելու մտահոգութեամբ: Երբ ճաշասրահէն դուրս ելաւ, մտքին մէջ ամէն բան կը պարէր. եւ փոխն ի փոխ իր յաջողութեանց ուրախութիւնը, ընդունարուած կնոջ ներդաշնակ սիլուէթը՝ վայելքի եւ չճաշակուած հաճոյքներու փափաքով կը տանջէին զինքը. երբեմն ինքզինքը կը յանդիմանէր օրէ օր իր մեծ մարդու խիստ պարկեշտութիւնը կորսնցնելուն համար ու կը սրմնջէր իւրովի.

Այս քաղաքը զիս պիտի կորսնցնէ:

Մտքին մէջ կ'ուրուագծուէր արդէն հեռաւոր ծրագիր մը. հիմակ որ իր յաջողութեան վստահութիւնը ունէր, հիմակ որ իր հանճարը դադրած էր գաղտնիք մը ըլլալէ, աւելի լաւ չէ՞ր որ վերադառնար Պօլիս, իր սիրելի Աննիկին մօտ եւ անոր ներկայութեամբ կազդուրուած շարունակէր իր գործը. կ'երեւակայէր իրեն ըլլալիք ընդունելութիւնը, փայփայտած եւ շողոքորթուած իր ընկերներէն ու սիրտը կ'ողողուէր ջերմ հաճոյքով մը. իրաւ է որ տխմարներ պիտի ըլլային, նախանձողներ եւ անկարողներ որ չպիտի հասկնային զինքը, որ անիրաւ պիտի գտնուէին իրեն նկատմամբ, բայց նոյն իսկ այս պարագան զինքը պիտի նուիրագործէր. հալածուած եւ անտեսուած մարդիկ միշտ լուսապսակ մը կ'ունենան իրենց համբաւին շուրջը եւ վերջապէս ամենէն հաւնութիւնը լաւ

յանձնարարական մը շէ բնաւ:

Այս բաներուն վրայ մտածելով կ'ողորուէր դէպի Միլլերի սրճարանը երբ տեսաւ Բարսեղը որ աճապարանքով անկէ ելնելով դէպի պուլվար կուգար. իրեն դէմ գնաց:

Ա՛հ, գրեց փնտռելու վրայ էի եղբա՛յր, ըսաւ, գինքը տեսնելուն պէս:

Այն ատեն Տաճատ անդրադարձաւ որ իր ընկերը չափազանց տժգոյն էր եւ մեծ անձկութիւն կար անոր դէմքին վրայ:

Ի՞նչ ունիս, ըսաւ Տաճատ:

Մանուկը, եղբա՛յր, շատ ծանր է, եկու միասին:

Ճամբան պատմեց եղելութիւնը:

Մանուկ ստիպուելով իր բնակարանը ձգել, փոխադրուած էր ուրիշ սենեակ մը, դարձեալ Մոնթ փողոցին մէջ ու տեղափոխութեան միջոցին չարաչար յոգնելով ու ցուրտ առնելով անկողին ինկած էր. անկէց ի վեր չէր կրցած իր ընկերներուն երեսալ. ոչ որ գիտէր թէ ի՞նչ եղած էր. այն առաւօտը միայն Լուիզ եկած էր գինքը գտնելու եւ կացութիւնը բացատրելու. անմիջապէս ընկերացեր էր խեղճ աղջկանը եւ գտեր էր Մանուկը, անճանաչելի վիճակի մը մէջ, մահուան պէս տժգոյն, հիւծուած:

Բարսեղ գլուխը կը տատանէր դիրութեամբ:

Գէշ վիճակի մէջ է կարծեն, եղբա՛յր, յոյս չունիմ ես:

Տաճատ մեքենաբար կը քալէր առանց խօսելու, թոպէ մը ըմբոստացաւ այն գաղափարին դէմ որ կուգային իր թանկագին ժամանակը գրաւելու, ուշադրութեան արժանի կէտ մըն էր ասիկա իր նկարագրին մէջ. օրերով, շաբաթներով տող մը չէր գրեր, միտքը տարտամ եւ ժամանակը կորսնցնելով երազանքով կամ զբաղած ծրագիրներ կազմելու... կը բաւէր որ քանի մը ժամ ուրիշներու տրամադրելու հարկին մէջ ըլլար, որպէս զի կարծէր, ջերմապէս

հաւատար որ այդ ժամերուն մէջ հրաշալիքներ պիտի արտադրէր. իրաւամբ գարնանալի հակասականութեամբ մը ինքզինքը բեղմնատր եւ արտադրելու վիճակի մէջ կ'զգար, ճիշդ երբ նիւթական արգելք մը կ'ելնէր իր դէմը: Յանկարծ այս ստածումներուն անսալով, կոպտութեամբ ըսաւ Բարսեղին.

Չեմ հասկնար իմ ներկայութեանս անհրաժեշտութիւնը, ի՞նչ օգուտ կրնայ ունենալ հիւանդի մը քով, աւելի աղէկ է բժիշկ մը բերել:

Բարսեղ՝ այս խօսքերուն՝ իրեն դարձաւ եւ աչքերը սեւեռեց այնպիսի նշանակալից խստութիւնով մը որ Տաճատ ստիպուեցաւ իրենները խոնարհեցնել եւ ալ առանց դիտողութիւն ընելու հետեւեցաւ Բարսեղին:

Երբ Մօմժ փողոցը Մանուկի բնակած տունը հասան, Բարսեղ շնչասպառ ելաւ վեց յարկերը ու երբ Տաճատ հասաւ ետեւէն՝ սենեակին դուռը բացուած էր արդէն եւ մոմին դողդոջուն լոյսը կ'երկարէր մինչեւ դուրս. Բարսեղ մատը շրթունքին դրաւ եւ լռելեայն մտան ներս. ա՛հ ցուրտ եւ տխուր սենեակը. կարծես մասնատր եւ ճնշող մթնոլորտ մը ունէր բեռնատրուած հիւանդին կարճ եւ հեւքոտ շնչառութենէն, վատարանին առաջքը Լուիզ հակած կը ջանար քարէ պզտիկ ջերմոցը վառել. մոմին անբաւական լոյսը կէս ստուերի մէջ կը ձգէր եւ կը պարտկէր աստիճան մը պատերուն խոնաւ մերկութիւնը. անկիւնը երկաթեայ մահճակալի մը մէջ Մանուկ կը քնանար: Տաճատ գարնացումով կը դիտէր անոր անհաւատալի այլափոխութիւնը, այտերը խոռոչացած էին եւ գանկոսկրը խոշորցած լայնցած կը թուէր որուն վրայ պրկուած եւ թափանցիկ մորթին տակէն ոսկորին դեղնորակ երանգը կ'արտացոլար. աչքերը նոյնպէս կորսուած էին խորութիւններու մէջ. արդէն անիկա մահուան դիմակը ունէր, անաշխարհային արտայայտութեամբ մը իր քնացած դէմքին վրայ. երբեմն շնչառութիւնը թեթեւ, անլսելի կը դառնար եւ երբեմն ալ ամբողջ մարմնոյն ցնցումներ կը պատճառէր, հեւքոտ, գրեթէ խոպոտ որուն տաժանքին ներքեւ աչքերը կէս մը կը բացուէին եւ շրթունքը անլսելի բառեր կը մըմնջէին:

Բարսեղ եւ Տաճատ լուռ նստած էին անկողնին մօտ եւ կ'զգուշանային նոյն իսկ իրարու նայելու, երբեմն խորունկ եւ սրտագին հառաչ մը կ'ընկերանար հիւանդին հեւքոտ շնչառութեան. անգամ մը, Մանուկ աւելի ուժգին ցնցուելով բարձրանալու ջանք մը ըրաւ, աչքերը բացաւ, մոլորուն նայուածքով, կարծես մէկը փնտռելով ու

չտեսնելով իր ընկերները. յետոյ ինկաւ իր բոլոր ծանրութեամբ կոնակին վրայ եւ գոչեց.

Մայրի՛կս, մայրի՛կս...:

Տաճատ Բարսեղին նայեցաւ փղձկուած. ճշմարիտ եւ մարդկային յուզմունքը մտած էր իր հոգւոյն մէջ. Բարսեղ անթափանց եւ ջերմեռանդ երեսոյթ ունէր. յայտնի էր որ առաջին անգամը չէր որ պանդուխտ ընկերոջ մը սնարին քով այս գերագոյն կոչը կը լսէր. ու ո՞վ գիտէ ինչ կը խորհէր այդ միջոցին. իր դէմքը դառն եւ տխուր արտայայտութիւն մը առած էր. երբեմն գլուխը ատելի կը ծռէր, իր խոշոր ձեռքերը կը դնէր ծունկերուն վրայ՝ մատները գալարելով ջղածգօրէն անգսպելի յուզմունքի մը ազդեցութեան տակ:

Սպասումի եւ անձկութեան ժամեր անցուցին այսպէս. Մանուկ միշտ կը քնանար եւ հետզհետէ իր շնչառութիւնը կը թեթեւնար, անլսելի կը դառնար. հեւքերը եւ հատաչները կը խեղդուէին կարծես կտրծքին մէջ եւ ուժ չունէին այլեւս արտայայտուելու. Լուիզ յաջողած էր վերջապէս ջերմոցը վառել եւ անոր մօտ սկսաւ մրափել անքուն անցուցած քանի մը գիշերներու յոգնութենէն յաղթուած: Կէս գիշերը անցած էր. տանը մէջ ամէն աղմուկ լռած էր այլեւս, երբեմն միայն ուշ մնացած ուսանողի մը ոստոստուն քայլերը կը լսուէին սանդուղներուն վրայ եւ որոնք կը բարձրանային մինչեւ վեցերորդը ու կը կորսուէին նրբանցքին խորութիւններուն մէջ:

Հիմակ այլեւս Տաճատ անսահմանելի վախ մը կը զգար. պիտի չուզէր ոչ մէկ բանի համար առանձին գտնուիլ ինքզինքին հետ. այդ մահամերձի արտայայտութենէ գուրկ դէմքին պատկերը կարծես կառչած էր իր աչքերուն եւ առանց անոր նայելու ալ կը տեսնէր գայն. իր հոգւոյն մէջ անկայուն, դողդոջուն բան մը սպրդած էր որ հիւանդին շնչառութեան չափականութիւնը ունէր եւ որուն չափովը ակամայ կը շնչէր ինքն ալ. ու գաղափարէ գաղափար միտքը կը թափառէր ծանր մտածումներու մէջ. կանգ կ'առնէր այս ինչ կամ այն ինչ պարագային վրայ եւ ասոնց ամբողջութենէն հետզհետէ անդիմադրելի եւ ահաւոր կ'ուրուագծէր մեծ եւ սարսփիչ քաղաքին առթած սարսափը:

Պէտք է մեկնիլ, մեկնիլ անմիջապէս... կարծես Մահը, այնքան մերձաւոր իրենց այդ րոպէին, իրեն կը հպէր, գինքը կը պարուրէր իր քայքայումի հանդարտ բայց անվրէպ ազդեցութեամբը:

Յանկարծ Մանուկ աչքերը բացաւ: Հիւանդագին կարմրութիւն մը ունէին անոր ճակատը եւ այտերուն վերին ու ցցուած մասերը. աչքերը անսովոր կենդանութիւն մը եւ գեղեցկութիւն մը ստացած էին. թարթիչները իրենց արագ թարթափումին մէջ երկայն շուքեր կը ձգէին դէմքին վրայ:

Տաճատ զարմացումով դիտեց թէ մէկ վայրկեանի մէջ փոխուած էր անիկա. տենդին ազդեցութեան տակ կենդանացած՝ Մանուկ առողջութեան պատրանքը կուտար. գրեթէ առանց դժուարութեան ելաւ նստեցաւ անկողնին մէջ. յետոյ մեղմօրէն ժպտեցաւ իր ընկերներուն, Բարսեղ եւ Տաճատ յուզմունքի սաստկութենէն բան մը չէին կրնար ըսել, բայց Մանուկ իրենց սիրտ տուաւ իր սովորական, գրեթէ ջինջ ձայնովը.

Շատո՞նց է որ հոս էք... երկայն քնացայ, հէ՞... ինչո՞ւ չարթնցուցիք զիս, վա՛յ սատանայ, ի՛նչ հարբուխ, ընկերներ՛ր. քանի օրէ ի վեր տանջուեցայ, բայց հիմա աղէկ եմ:

Անգիտակցաբար սակայն, ձեռքերը՝ երկնցած մատներով եւ կապտորակ եղունգներով կը գալարուէին վերմակին վրայ. Տաճատ աչքին ծայրովը կը նայէր անոնց:

Ի՛նչ տարութիւն... Լուիզը գիտէ, զառանցանքներ ունեցայ:

Յետոյ, երիտասարդ ուսանողի իր վաղեմի սովորութեամբ ամէն բան հեզնելու, սկսաւ կատակներ ընել. նոյն միջոցին բռունցքը կուրծքին զարկաւ.

Այս կմախքը դեռ բաւական հաստատուն է. հոգ մի՛...

Ձայնը խղդուեցաւ հագի տագնապի մը մէջ. Լուիզ աչքերը բացաւ եւ իր մօտ եկաւ, ամենքն ալ հաւաքուած էին անկողնին մօտ գթութեամբ խառն զարմացումով մը. Մանուկ քանի՛ անգամ հագի միջոցին ուզեց խօսիլ. բայց չկրցաւ, ու աչքերը կը շարունակէին խնդալ, վերադարձած իրենց հին

արտայայտութեանը:

Կը տեսնէ՞ք, յաջողեցաւ ըսել վերջապէս, եթէ այս հագը չունենայի... , պահ մը լռեց, մտածկոտ, յետոյ հագի լսելի մրմնջեց... վա՛յ սատանայ...

Յանկարծ անսահման տխրութեան դիմակ մը առաւ. աչքերը մարեցան, դէմքը ամէն ուղղութեան կնճռոտեցաւ. շրթունքները դեռ խոնամ՝ լորձունքէ դառնութեան արտայայտութիւն մը ունեցան, միայն այտերը կարծես աւելի ցցուած կը բոցավառէին վատառողջ կարմրութիւնով մը, այլ եւս չխօսեցաւ՝ պաշարուած ո՞վ գիտէ ինչ մտածումով. այն ատեն Բարսեղ քաջութիւն առաւ եւ թէւ ձայնը քիչ մը դողդոջուն՝ վստահութեամբ ըսաւ իր ընկերոջը.

Ման՛կ, դուն պէտք է հանդարտ մնաս այսպէս. մենք կ'զբաղինք քեզմով. ուրիշ ընկերներու ալ կ'իմացնենք եւ փոխն ի փոխ կը խնամենք զքեզ. վաղը առաւօտ տօքթէտ Քօլօլեանը պիտի գայ, իմացուցած ենք արդէն իրեն...: Հիւանդը տխրութեամբ կը նայէր Լուիզին, Բարսեղին եւ Տաճատին եւ անոնց առողջութենէն օգնութիւն կը հայցէր կարծես. իր աչքերը ալ աւելի տղու աչքեր դարձած էին, լալու պատրաստ եւ որոնց արցունքը իյնալէ առաջ կը չորնար, այնքա՛ն անոնք վառելու երեւոյթը ունէին. իր ամբողջ դողդոջուն կեանքը ապաստանած էր այդ երկու լայն բացուած բիբերուն մէջ, եւ հոն կը հատնէր կարծես. հետզհետէ, իր ընկերներուն աչքին առաջ: